

38. *ՈՐՄՆԱԽԱՁԻ շրջանակներին.*

ՀԱՅՐ ՍՏԵՓԱՆՈՍ . . . . . .

ՅԱԴԱՒԹՍ ՅԻՇԵՑԷՔ. :ՉԴԲ: (1345):

## 4. ՀԻՆ ՍՈՅԼԱՆ

*Նախկինում այստեղ Հին Սոյլանի կողքին շինվել էր Նոր Սոյլանը՝ բաղկացած մի քանի տուն բնակիչներից։ Այժմ այդ ամբողջ տարածության վրա, խճուղու երկու եզրերին, շինվել է քաղաքատիպ տներով բանվորական ավան։ Ավանի արևելյան ծայրին թաղում են Հին Սոյլանի ավերակ եկեղեցին իր գավթով, նույնպես ավերակ, իսկ դրանց դիմաց, խճուղու եզրին, կանգնած է սև, մարմարանման քարից մի կոթող, վրան քանդակված խաչ. իսկ տակին, դծերի մեջ՝ արձանագրություն, 14 տող.*



39. Թ·ՎԱԿ|ԱՆԻՍ :ՈՀԱ: (1222) |ԿԱ⌊Ն⌋ԿՆԵՑԱ|Ի Խ⌊ԱՉ⌋Ս. ՈՎ Ս|ԴԲԱՐՔ Զ⌊Ց⌋Ո|ԳՆԱՄԵԴ|Ս ԱՌԱՔ|ԵԱԼ ՅԻՇԻ|ՋԻՔ Ի ·Ք̅Ս̅. |ԵՒ Ա̅Ծ̅. ՉԵ|Զ ՈԴՈՐՄԵՍՑ⌊Է⌋: |ՏԽՄԱՐ |ԳՐԻՉՍ ՇԱՊՈՒՀ ՅԻՇԵ⌊ՑԷՔ⌋:

Ծանոթ. *Հիմնական մասը գրված է խաչքարի հյուսիսային կողի ստորին մասում (11 տող). վերջին երեք տողը, գրչի հիշատակագրությունը՝ արևմտյան երեսին, խաչի տակ։*

Հրատ. *Բաջբերունի, Փորձ, 1877/78, № 4, 352։*
*Ալիշան, 129։*
Լուսանկ. 19:

## 5. ՄՈՂ ԱՎԱՆԻ ԱՎԵՐԱԿՆԵՐԸ

*Մալիշկա գյուղից 3—4 կիլոմետր դեպի հարավ-արևելք, Արփա գետի աջ ափին, լերկ քարաբլուրների ու կոշկոռների արանքներում, երեք կիլոմետր երկարությամբ տարածվում են մեծ և անտաշ քարերով շինված բազմաթիվ տների ավերակները։ Վայոց ձորի հնագույն բնակատեղիներից մեկի, Մող ավանի ավերակներն են դրանք։ Տեղացիների մեջ ավանդաբար պատմվում է, որ այդ քարե գյուղը երկրաշարժի ժամանակ ժայթքած լավայի սառած բեկորներն են։ Ստ. Օրբելյանն իր աշխատության մեջ առանձին գլուխ է նվիրել երկրաշարժի հետևանքով կործանված Մող ավանին, այդ դեպքը կապելով Ստեփանոս իմաստասեր եպիսկո-*

պոսի եղեռնական ապանությամ հետ՝ 735 թ. հուլիսի 21-ին, հայկական տոմարով՝ 184 թ. հրոտից 15-ին[1]։

Այդ սարսափելի ավերածությունից հետո, սակայն, Մոզ ավանը չի դադարել բնակավայր լինելուց։ Ստ. Օրբելյանի՝ գյուղերի ցանկի մեջ այն հիշատակվում է որպես մեծ գյուղ՝ 12 չափ հարկով. իսկ տեղագիր հեղինակները հիշատակել են ավերակների մեջ գտնվող միայն թվականներ ունեցող մի քանի խաչքարեր, որոնցից ամենանորը կրել է 1483 թվականը։

Ե. Լալայանը հիշատակել է քարաբլուրներից մեկի վրա գտնվող, ավերակ եկեղեցու մոտ ընկած երկու խաչքարերի բեկորներ, որոնցից մեկը թվագրված է եղել՝

**40.** :ՉԻ:

իսկ մյուսը՝

**41.** :ՉԼԲ: թվականներով[2]:

Քաջբերունին նույն, կամ մի այլ ավերակ եկեղեցու մոտ նշել է երկու նույնպես ջարդված խաչքարերի միայն թվականները, որոնցից մեկը ունեցել է՝

**42.** :ՉԻ:

իսկ մյուսը՝

**43.** :ՉԼԲ: թվականները[3]:

Մոզ ավանի ավերակների մեջ մենք նկատել ենք երկու գերեզմանատների մնացորդներ՝ ներկա խճուղու աջ և ձախ կողմերին, ձախ կողմի (Մալիշկա գյուղից հաշված) գերեզմանատանը մնացել են մի քանի հասարակ, տափակ գերեզմանաքարեր, առանց արձանագրության, աջ կողմինը, որը ճանապարհին կից թմբի վրա է, կային նույնպես փոքրաթիվ, բայց տապանագրեր ունեցող հուշարձաններ, շատերի վրա բոլորովին եղծված. մեզ հաջողվեց վերծանել հետևյալները.

**44.** ԽԱՉՔԱՐ, պատվանդանից ընկած և կոտրված. մնում է միայն սարին մասը, վրան 5 տող.

:ԹՎՉԼԸ:ԵՍ ՄԽ· · · · ·
ԴԻՍԱՐ ԳԻՍԻ· · ·
ՆԳՆԵՅԻ ՉԻՍԿԱ·
ՐԷՄԱՒՐԻՄՈՅՈՎԿԱՐԴ
ԱՅՔԱՂԱՒԹԱՅԻՂԵՑԷՔ

Թվ. :ՉԼԸ: (1289). ԵՍ ՄԽԻԹԱՐ ՈՐԴԻ ՍԱՐԳԻՍԻ ԿԱՆԳՆԵՑԻ ՉԽԱՉՍ ՀԱՄՐ ԵՒ ՄԱՒՐ ԻՄՈՅ: ՈՎ ԿԱՐԴԱՅՔ ԱՂԱՒԹՍ ՅԻՇԵՑԷՔ:

**45.** ԾԱՂԿԱՆԱՓԵՐ, ոտփոկ, երեսի երկու շրթունքների շրջանակներին 2 տող.

Ի ԹԻՍՆԻԽԴԱՅՍԱՅՀԱՆԳԻՍ
ՏՈՎԱՆԻՍԻ

Ի Թ[վ]ԻՍ :ՉԽԴ: (1295). ԱՅՍԱՅ ՀԱՆԳԻՍՏ ՈՎԱՆԻՍԻ:

---

[1] Ստ. Օրբելեան, Պատմութիւն, գլ. ԼԱ։

[2] Ե. Լալաեան, Ազգ. հանդ. XII, 257։

[3] Քաջբերունի, Փորձ, 1877/78, № 4, 350։ Հավանաբար Լալայանի և Քաջբերունու նշած խաչքարերը նույնն են, բայց երկու հեղինակները թվականների հարյուրավորները տարբեր են վերծանել, այսպիսի դեպքում ավելի վստահելի պետք է համարել Քաջբերունու վերծանությունը։



*46.* ***ԽԱՉՔԱՐԻ*** *երկու բեկորներ, ընկած իրարից 20 քայլ հեռու։*

Ի ԹՎ. ։ՉԾ։ (1301) ՁԵՌԱՄԲ . . . .

ԿԱՆԳՆԵՑԱՒ ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻ.

ԳՐԻԳՈՐԻՆ ԵՒ ԾՆՈՂԱՑՆ ԴԱՒԹԻՆ.

Ծանոթ. *Վերին մասի բոլոր և ստորին մասի միայն վերջին բառը գրված են ուռուցիկ տառերով. ըստ երևույթին հասցել է թերի։*

*47.* ***ՏԱՊԱՆԱՔԱՐ,*** *տափակ, երեսի կենտրոնական մասում չորս գնդաձև զարդեր. շրթունքների շրջանակների մեջ 3 տող.*



ԹՎ. ։ՉԾԵ։ (1306). ՄՆԾ Է Ս.Թ. ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԷԼԱՍԼԱՆԱՅ, ՈՎ ԿԱՐԴԷՔ ԱՍԱՑԷՔ ՄԻ ԲԵՐԱՆ ԹԷ ՏՐ. Ա.Ծ. ՈՂՈՐՄԻ ԷԼԱՍԼԱՆԱՅ ԱՄԵՆ։

*48.* ***ՏԱՊԱՆԱՔԱՐ.*** *օրորոցաձև, բութանկյուն երկթեք. արձանագրությունը եղել է երկու երեսներին, այժմ մեծ մասամբ եղծված. նշմարվում է հարավում՝*




ԱՅՍ [Է ՀԱՆԳԻՍՏ . . .

*Հյուսիսում՝*

ԱՂԲԻՐԻ ՅԱՂԱԽԹԱ ՅԻՇԵՑԷՔ]։